ՀԱՆԳԻՍՏ
ՍՏԵՓԱՆ ՍՐԱՊՅԱՆԻ
(1906—1972)

Հունիսի 9-ին, ուրբաթ օրը, Միլանում, 66 տարեկան հասակում, վախճանվում է Մայր Աթոռի հարազատ զավակ ու բարերար, Միլանի գաղութային վարչության նախագահ և ազգային-հասարակական գործիչ Ստեփան Սրապյանը:

Հանգուցյալը ծնվել է 1906 թվականին Կեյվեյում:

1915 թվականի եղեռնի արյունոտ օրերին նա ինը տարեկան հասակում բաժանել է իր ազգի տխուր ճակատագիրը և հագել որբության կրակե շապիկը:

1921 թվականին իր եղբայր՝ ապագա բանաստեղծ Արամայիսի և բազում այլ հայ որբերի հետ ապաստան է գտնում Հունաստանի Կորֆու կղզու որբանոցում, ուր և ստանում է իր նախնական կրթությունը՝ աշակերտելով արևմտահայ հանրածանոթ մտավորականների՝ Թեոդիկին, Արշակ Ալպոյաճյանին, Լևոն Թութունջյանին, որոնք հայ որբուկների մտքի և հոգու անդաստաններում սերմանում էին պաշտամունքը հայ եկեղեցու, հայ լեզվի ու գրականության, ոգին հայոց պատմության ու հավատքը վառ գալիքի և ազգային վերածննդյան:

«Կիլեն գիրքը անոնք, կատաղորեն, հացի պես.
Մարդոց ոճիրը զանոնք զերթ մեյ-մեկ սուր է դարբնած.
Ա՛հ, զորացո՛ւր, կարծրացո՛ւր, մեծցո՛ւր զանոնք, կա՛ծր Աստված»:
(Վ. Թեքեյան):

Այնուհետև հանգուցյալը աշակերտում է Վենետիկում՝ Մխիթարյանների Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում և, այն հաջողությամբ ավարտելուց հետո, հետագայում իր ողջ գիտակցական կյանքը նվիրում իտալահայ համայնքի եկեղեցական-մշակութային և ազգային կյանքի կազմակերպությանը և առաջնորդացին, որպես իտալահայ գաղութային վարչության և Հայկական բարեգործական ընդհանուր միության Իտալիայի տեղական մասնաճյուղի ատենապետի:

Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի գահակալության տարիներին Ստեփան Սրապ-

յանը, իանդիսաւորուած Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի եկեղեցաշէն ու հայրենանվեր գործունեությամբ, որդիական երախտագիտությամբ, իր բարոյական ու նյութական աջակցությունն է բերում Նորին Սրբության շինարարական-կառուցողական

Հանգուցյալի մասով Մայր Աթոռ ս. Էջմիածինը կորցրեց իր հավատավոր ու հարազատ զավակներից մեկին, իսկ իտալահայ գաղութը՝ իր հայրենանվեր ու ազնիվ ղեկավարներից մեկին:

Մայր տաճարում հունիսի 11-ին, կիրակի



Ստեփան Սրապյանը 13 տարեկան, Կորֆուի որբանոցում (առաջին շարքում ձախից երկրորդը)

ձեռնարկներին՝ արժանանալով Հայոց Հայրապետի բարձր գնահատությանն ու ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանին:

1965 թվականին, Հայոց Հայրապետի գահակալության տասնամյակի հանդիսություններին, Ստեփան Սրապյանը պաշտոնապես ներկայացնում է իտալահայ համայնքը, Մայր Աթոռում կատարվող հոբելյանական հանդիսություններին:

Հանգուցյալ Ստեփան Սրապյանը եղել է նաև ջերմ ու խանդավառ հայրենասեր հայորդի և աշխատել է իտալահայ համայնքի հայրենասիրական կապերը սերտացնել մայր հայրենիքի հետ:

օրը, Հայոց Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ ի հիշատակ նորոգ հանգուցյալ Ստեփան Սրապյանի:

Խո՛ւնկ և օրհնությո՛ւն ազնիվ և բարի Ստեփան Սրապյանի անմոռաց հիշատակին:

Հանուն «Էջմիածին» ամսագրի խմբագրության, մեր զգացված խորը ցավակցությունն ենք հայտնում հանգուցյալ Ստեփան Սրապյանի ազնվահոգի կնոջը՝ տիկին Ծինա Սրապյանին, նրա երկու սիրասուն զավակներին և հարազատներին ու բարեկամներին: